

## Նատալիա Տեր-Գրիգորյան-Դեմյանյուկ

### «Ժողովուրդ», «արիացիներ», «սեմիտներ» և «քամյաններ» հասկացությունների մասին:

Իմ տարբեր գործերում տարբեր առիթներով բազմիցս լուսաբանել եմ «Ժողովուրդ», «Արիացիներ», «Սեմիտներ» և «Քամյաններ» հասկացությունները: Սակայն խնդրի կարևորությունից ելնելով՝ որոշեցի նաև մի առանձին հոդված նվիրել նրանց:

Բոլոր այս հասկացությունները (ընդունվում է դա, թե ոչ) Աստվածաշնչից են ծագել, որը, մերժված լինելով աշխարհիկ գիտության կողմից՝ այնուամենայնիվ մեծ հետք է թողել նրա բոլոր ոլորտներում: Ճիշտ կամ սխալ մեկնաբանված՝ այդ հասկացությունները առկա են նաև լեզվաբանության մեջ, որը Աստվածաշնչից շատ անուններ է վերցրել և այս կամ այլ կերպ հաստատում է նրա տեկստերը: Մասնավորապես, լեզուների օբյեկտիվ վերլուծությունը հստակ ցույց է տալիս նրանց հիմնական բառերի և հասկացությունների արմատների նույնությունը: Իսկ դա նշանակում է, որ բոլոր լեզուները (թեկուզև պատկացող տարբեր լեզվական ընտանիքներին) մեկ հիմք են ունեցել, որը փլուզվել է վերջինիս մասնատման կամ փոփոխման արդյունքում: <sup>1</sup> Այս փաստը վավերացնում է բաբելոնյան խառնաշփոթի մասին աստվածաշնչյան առակը, ըստ որի Աստծո եզակի լեզուն բաժանվեց բազմաթիվ լեզուների, որոնց թիվը, ի դեպ, այդ ժամանակից ի վեր չի դադարել բազմապատկվելուց, ստեղծելով համայնքներ, որոնք երկրի վրա **ժողովուրդներ** են կոչվում: *Ժողովուրդների* և լեզուների այս անվերջ բազմացման պատճառը կայանում է նրանցից յուրաքանչյուրի փլուզման մշտական գործընթացի մեջ, որի հետևանքով ձևավորվում են նոր լեզուներ և *ժողովուրդներ*: Այս տարանջատումը պայմանավորված է *ժողովուրդների* ներքին անհամաձայնության հետ, որի աղբյուրը յուրաքանչյուրի մեջ երկու թշնամական ոգու առկայությունն է: Խոսքը գնում է *բարու*, *արդարության* ու *ստեղծագործության* և *չարի*, *անարդարության* ու *ոչնչացման* ոգիների մասին, որոնց կրողները գտնվում են հավերժական պայքարի մեջ, ակնհայտելով այն փաստը, որ, ըստ էության, երկրի վրա ոչ թե շատ ժողովուրդներ են ապրում, այլ

միայն երկու համայնքներ, որոնք տարբերվում են իրենց ոգով: Դրանք ստեղծողների և քանդողների համայնքներն են, որ երկրի վրա անուն չունեն, քանզի երկրի ժողովուրդները միավորված են ոչ թե ոգու հիմքի վրա, այլ էթնիկական, լեզվական, տարածքային կամ քաղաքական հիմքերի վրա, առանց հաշվի առնելու նրանց առանձին ներկայացուցիչների հոգևոր պատկանելիությունը կամ աշխարհայացքը: Եվ այդպիսի «ժողովուրդներ» կոչված միություններից յուրաքանչյուրը ընկալվում է որպես մի ամբողջություն, չնայած որ ոչ լեզվի, ոչ տարածքի ընդհանրությունը, ոչ մեկ էթնիկ խմբին պատկանելիությունը և նույնիսկ ոչ էլ ընդհանուր կրոնը չեն ապահովում նրանց ամբողջությունը, քանզի այդ «ժողովուրդների» ներսում անփոփոխ կերպով ոմանք կյանք և համայք են ստեղծում, իսկ մյուսները ոչնչացնում են դրանց:

Ներքին՝ ոգու միասնության պակասը, հետևաբար, հակասում է «ժողովուրդ» հասկացության ամբողջականությանը: Սա է հիմնական պատճառը, որ մինչ այսօր ժողովուրդ հասկացությունը միջազգային հանրության կողմից ընդունված հստակ սահմանում չունի: Իսկ այն, ինչ կոչվում է ժողովուրդներ, հոգևոր տեսանկյունից խառնամբոխներ են, որ ձևավորվել են էթնիկական, տարածքային, լեզվական կամ քաղաքական հիմքերի վրա: Այլ կերպ ասած՝ իրենց ժողովուրդներ անվանելով՝ դրանք, ըստ էության, ժողովրդներ չեն, այլ արհեստական ձևավորումներ՝ հակված ինքնառնչացման կամ մասնատման: Նման ժողովուրդներ/խառնամբոխների գոյությունը համեմատելի է Պոտեմկինի հայտնի գյուղերի հետ, որոնք իրականում այնպիսին չեն, ինչպես ներկայացված են: Նրանց գեղեցկությունը խաբուսիկ է և կարճատև, քանի որ առանց միասնական աշխարհայացքի դրանք հոգի են դավաճանություններով ու սպանություններով և նմանվում են բազմազուլիս վիշապի, որի գլուխները կծորտում են միմյանց մինչև փոխադարձ ոչնչացումը: Այդ խառնամբոխների երկրային ճակատագիրը կախված է նրանց մեջ այս կամ այլ ոգու գերակշռությունից: Բայց նույնիսկ բարու ոգու գերիշխման դեպքում, միննույն է, հարատև խաղաղություն չունեն, քանի որ այդ խաղաղությունը այսպես կան այնպես խափանվում է չար ոգու ներկայացուցիչների կողմից, նույնիսկ եթե նրանք փոքրամասնություն են կազմում:

Ընդհակառակը, ժողովուրդ նախնական, կամ ենթագիտակցական, հասկացությունը ոչ թե էթնիկական, կամ տարածքի, կամ լեզվի հիմքերի վրա ստեղծված միասնություն է ներկայացնում (քանզի այդ ամենը կործանիչ ոգու գործունեության հետևանք է և այդ պատճառով ժամանակավոր է և պատրանքային), այլ ենթադրում է ստեղծող ոգու վրա կազմված միասնություն: Այդ ստեղծող Ոգին Արարչի կենդանաբար Ոգին է, որ հյուսում է կյանքի կտավը նրա յուրաքանչյուր թելերի, մասնիկների փոխկապակցման և փոխկապվածության հիման վրա, այսինքն՝ վերջինների միջև փոխադարձ սիրո, հարգանքի և արդար վերաբերմունքի հիման վրա: Իսկ դա, իր հերթին, ենթադրում է հոգիների միասնություն, առանց որի ոգու միասնությունը անհնար է: Պողոս առաքյալը, հայտնելով իր հետևյալ ցանկությունը՝ փաստորեն, երկու

խոսքով նկարագրել է *ժողովուրդ* հասկացության իմաստը, ասելով. «**եղէ՞ք միաշունչ, միախորհուրդ: Մի՛ արեք որեւէ բան հակառակութեան ոգով, ոչ էլ որեւէ բան՝ սնապարծութեամբ, այլ խոնարհութեամբ մէկդ միասին աւելի լա՛ւ համարեցէք, քան ինքներդ ձեզ**»: (Ֆիլիպ 2: 2-3)

Այլ կերպ ասած՝ իրական *ժողովուրդի* աշխարհընկալման հիմքում ընկած են *սերն ու խոնարհությունը*, որոնք արարչության կյանքի սյուններն են: Այդպիսի *ժողովուրդի* ներքին համաձայնությունը նման է այն համաձայնությանը, որը հատուկ է մարդու մեկ գլխով դեկավարվող մարմնին:

Բայց Բաբելոնյան խառնաշփոթից հետո, երբ չարը խառնվեց Աստծո արարչությանը, այդ *ժողովուրդը* որպէս այդպիսին դադարեց իր գոյությունը երկրի վրա, քանի որ նրա ներկայացուցիչները մարմնով խառնվեցին չարի ոգին կրողների հետ և այդ ժամանակից ի վեր սկսեցին, *Եվայի* նման, ծնել *Կայեններ ու Աբելներ*, որոնց միջև չկա և չի կարող լինել համաձայնություն, քանի որ դրանք փոխադարձաբար բացառում են միմյանց, ինչպէս բարին և չարը, ճշմարտությունն ու սուտը և այլն: Այսպիսով, իրական *ժողովրդին* փոխարինել են *խառնամբոխները*, որոնք ոչ իրավացիորեն են իրենց «*ժողովուրդներ*» անվանում:

Աստվածաշնչի Թվերի գիրքը, փաստորեն, հակադրելով այս երկրի երեսից անհայտացած Աստծո *ժողովուրդը խառնամբոխներին*՝ այսպէս է նրան ներկայացնում.

«*Լեռներից եմ տեսնում նրան, բլուրների բարձունքից եմ նայում նրան: Ահա կայ մի ժողովուրդ, որ առանձին պիտի բնակուի, ազգերի մեջ չպիտի դասուի: Ո՞վ է ճշտել Յակոբի սերնդի թիւը, ո՞վ է հաշուել Իսրայէլի ցեղերը: Երա՛նի թէ ես մեռնէի այդ արդար մարդկանց հետ, եւ իմ յետնորդները լինէին նրա յետնորդների նման»»: (Թվ 23: 9-10)*

Այս խոսքերից պարզ է, առաջինը՝ որ Աստծո ժողովուրդը չի դասվում երկրային ժողովրդների, կամ ազգերի, մեջ, այսինքն՝ նա չի սահմանվում ո՛չ ըստ մարմնի, ո՛չ ըստ բնակության տարածքի և ո՛չ ըստ լեզվի, և երկրորդը՝ որ նա բաղկացած է բացառապէս արդար հոգիներից: Վերջիններս, ապրելով երկրային բոլոր *ժողովուրդների/խառնամբոխների* մեջ որպէս նրանց մի մաս՝ միաժամանակ տարբերվում են մյուսներից իրենց ճշմարտասէր և բարի ոգով, որի շնորհիվ մաս են կազմում նաև մի այլ, անտեսանելի *հոգևոր ժողովրդի*, որը գտնվում է երկրային *խառնամբոխներից* վեր:

Այնպէս որ «*ժողովուրդ*» հասկացության հստակ գաղափարի վերոհիշյալ բացակայությունը կապված է նաև Աստվածաշնչում ակնարկված կյանքին վերաբերող ճշմարտությունների սխալ ընկալման կամ նրանց անտեսման հետ: Իսկ այդ ճշմարտությունների սխալ ընկալումը կամ անտեսումը հանգեցնում է շատ այլ՝ Սուրբ Գրքից բխող հասկացությունների խեղաթյուրմանը, ինչպիսիք են, օրինակ, Արիացիներ (հաբեթականներ) և Սեմիտներ հասկացությունները, որոնք կամ անտեղյակությունից կամ էլ չարամտորեն հակադրվում են, մինչդեռ իրականում ամբողջություն են կազմում, ինչպէս ոգին ու հոգին:

Ասածս պարզաբանելու համար նախ տեսնենք , թե ովքեր են *արհացիները*, որտեղից է ծագել այդ բառը և ինչ է այն նշանակում:

Հայտնի է, որ երկրային գիտությունը *արհացիներին* կապում է հնդիրանական որոշակի էթնոսի հետ, որը ճանաչված է *արհացիներ* անվան տակ: Համարվում է, որ եվրոպական բոլոր «*ժողովուրդները*» այդ էթնիկ խմբից են կազմավորվել, ինչի պատճառով էլ իրենց *արհական* ժողովուրդներ են համարում: Այնուամենայնիվ, չնայած նրան, որ *արհական* հասկացությունը իրավացիորեն է ընկալվում որպես *ազնվական*, այսինքն *արդար՝ ժողովուրդ/խառնամբոխներին Արհական* անվանելը հիմնովին սխալ է, քանի որ այդ անվանումը կապված չէ *Արհացի* հասկացության բուն իմաստի հետ, որը, ինչպես ասացի վերևում, աստվածաշնչական ծագում ունի և ոչ թե ցեղական կամ պատմական, ինչպես ընդունված է մտածել: Եվ հենց դա է ապացուցում այն փաստը, որ *արհացի* այլապես անվանվում է *հաբեթացի*, կամ *հաբեթյալ՝ Նոյի Հաբեթ* որդու անունով:

Սակայն քչերն են խորհում նման կրկնակի անվան պատճառի և էության մասին: Իսկ դրանք հետևյալն են. աստվածաշնչյան «*ար*» արմատը, ինչպես ցույց եմ տվել իմ «*Загадочный Апарат*» գրքում, մատնանշում է *Երկնային Հորը* և Նրա *արարչությանը*, որի անվան հիմքում, ի դեպ, նույն արմատն է ընկած: Այն մենք առաջին հերթին տեսնում ենք *Արարատ* (*Ար-ար-ատ*) Աստծո լեռան անվան մեջ, որի բարձրադիր լեռնաշխարհի հետ է կապված աստվածաշնչյան դրախտը: Ըստ Ծննդոց, նա Աստծո ձեռքերով պատրաստված իր ժառանգության լեռն է: (Ելք 15.17): Նույն արմատը մենք տեսնում ենք նաև *Երուսաղեմ* (*Երու-սաղեմ*), կամ, այլ կերպ ասած՝ *Արիէլ* (Իս. 29: 1), անուններում, որոնցով Աստծո քաղաքն է նշմարվում: Բայց «*ար*» արմատի բնօրինակը հայկական «*Հայր*» բառն է, որի «*հ*» ձայնի առկայությունը ցույց է տալիս հասկացության հոգևոր իմաստը, այսինքն՝ այն ի սկզբանե վերաբերվել է *Հայր-Ոգուն*: Ժամանակի ընթացքում շատ լեզուներում «*հ*» հնչյունը կրճատվել է, թողնելով միայն «*այր*» արմատը: Այնուհանդերձ բառի իմաստը քիչ է փոխվել: Ըստ էության, մատնանշելով *Կյանքի*, կամ *Հոր կենդանարար Ոգուն*<sup>2</sup> (1 Կորնթ. 15: 45) նա ձեռք է բերել *օդի* ու *կրակի* հետ կապված նշանակություններ, ինչի ապացույցն են հանդիսանում՝ *air, aire, aero, aerial, ardiente* և այլն օտարերկյա բառերը:

Այնպես որ իրականում *արհացիները Աստծո*, այսինքն՝ *Արհական, ոգու* կրողներն են, որ կոչվել են այդպես իրենց *Հոր՝ Արարչի* անունով: Նրանք հոգևորապես ստեղծող մարդիկ են, որոնց իրավամբ պետք է պատկանար աշխարհի իշխանությունը: Սա է *արհատոկրատիա* բառի իրական և չխեղաթյուրված իմաստը, որը նշանակում է *Աստծո Ոգու կրողների իշխանություն*, այսինքն՝ նրանց, ովքեր կանչված են հոգ տանել ոչ թե իրենց անձնական բարիքների մասին, այլ ամբողջ արարածի բարգավաճման մասին, ինչպես ցանկանում է իրենց Հայրը, որը Սուրբ է: Հետևաբար սուրբ են նաև *արհացիները, ինչու և դարերի խորքերից ենթագիտաբցորեն հասկացվել են ու հասկացվում են մինչ այսօր որպես ազնվականներ*, այսինքն՝ *արդարներ*:

Մակայն երկրի վրա, որտեղ մարդու անկումից հետո տիրում է *ստի ոգին*, այս անունն ուզուրպված և կեղծված է ոսկե հորթի հաստաքսակ երկրպագուների և տիրակալների կողմից, որոնց ընչակուտակման ոգին ոչ մի կապ չունի *արիական ոգու* հետ, այսինքն՝ նրանք բոլորն էլ հակաարարչական ոգու *կրողներն* են, այն ոգու, որը հակասում է կյանքին: Եվ, հետևաբար, նրանց սխալ է *արիստոկրատներ* անվանելը:

Այստեղ կարևոր է հասկանալ նաև «*կրող*» բառի նշանակությունը, որ ենթադրում է որոշակի մի *ձև*, *անոթ*, ստեղծված ինչպես Աստծո Ոգու ապրելավայր: Ունենալով նշված իմաստը՝ այդ *ձևը* անմահ է, ինչպես ինքն Աստվածը: Աստվածաշնչում այդ ձևը *կենդանի էակ*, կամ *կենդանի հոգի* է կոչվում: Նոյի որդիների մասին աստվածաշնչյան առակը հենց այդ *ձևի(հոգու) և ոգու փոխհարաբերությանն է նվիրված:*

Ինչպես ես բազմիցս անգամ գրել եմ այս մասին՝ Նոյի երեք որդիներից, միայն մեկն է ներկայացնում այդ *հոգին*, այսինքն՝ միայն մեկն է իրական մարդը: Եվ դա *Մեմն* է: Մինչդեռ *Հաբեթը* և *Քամը* երկու ոգիների անձնավորումներն են, որոնք պայքարում են միմյանց հետ, մեկը՝ *Մեմի* կյանքի, իսկ մյուսը՝ նրա կործանման և մահվան համար: <sup>3</sup> Այս կապակցությամբ է, որ Նոյը իր որդիների էությունը բացահայտող որոշակի իրադարձություններից հետո, ասաց.

*«Անիծեալ լինի ստրուկ Քանանը եւ իր եղբայրների ծառան թող լինի»:* *Նա աւելացրեց. «Օրհնեալ լինի Տէր Աստուած՝ Մեմի Աստուածը, իսկ Քանանը թող լինի նրա ծառան: Աստուած թող բարգաւաճեցնի Յաբեթին, նա թող բնակուի Մեմի տանը, իսկ Քանանը թող լինի նրա ծառան»:* (Ծննդ 9: 25-27)

Եթե ուշադիր քննենք այս խոսքերը, ակնհայտ կդառնա, որ Նոյը երկու անգամ օրհնում է Աստծուն, քանի որ ասում է. «*Օրհնեալ լինի Տէր Աստուած՝ Մեմի Աստուածը*»: Իսկ հետո նա բացահայտում է, թե ո՞վ է *Մեմի* Աստվածը, ասելով. «*Աստուած թող բարգաւաճեցնի Յաբեթին, նա թող բնակուի Մեմի տանը*»: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ նա *Աստծո Ոգուն* է անվանում *Հաբեթ*, այն *Ոգուն*, որը պետք է բնակվի *Մեմում*, այսինքն՝ *մարդու հոգում*, որպեսզի վերջինս ձեռք բերի *Արարչի կերպարն ու նմանությունը*: Իսկ դա նշանակում է, որ *Հաբեթ* անվան տակ *Ինքն Տերն* է հասկացվում, ով *Աստծո կենդանարար Ոգին* է:

Այն, որ *Հաբեթը*, իսկապես, *Տերն* է, և ոչ թե *Մեմի* նման մի մարդաձև էակ, ինչպես սխալմամբ ընդունված է մտածել, ապացուցում է, բացի ասվածից, ևս երկու հանգամանք: Նախ՝ դա «Տարեդարձերի գիրքն» է, որտեղ նույն հատվածը այսպես է ներկայացված. «*Փառավորվի՛ Տերը, Մեմի Աստվածը, և թող բնակվի Տերը Մեմի տանը*»: <sup>4</sup>

Ինչպես տեսնում ենք, այստեղ *Հաբեթ* անունը փոխարինված է «*Տեր*» բառով, ինչը ևս մեկ անգամ շեշտում է այդ հասկացությունների նույնությունը:

Եվ երկրորդ հանգամանքը՝ դա երկարմատ *Հաբեթ* անվան բիբլո-լեզվաբանական վերլուծությունն է, որը ի ցույց է բերում նրա առաջին արմատի հիմքում թաքնված «*ար*»-ը՝ կրճատված տեսքով:

Որ հասկանալի լինի, թե ինչի մասին եմ խոսում, ուշադրություն դարձնենք նրա երկրորդ արմատ «բեթ»-ի լեզվական նմանությանը՝ *Եվա, Յահ-վեհ* և *Հակ – ռբ* անունների երկրորդ արմատի (*վա , վեհ, ռբ*) հետ: Ինչպես պարզվում է, դրանք բոլորը *Եվայի* անվան հիմքում ընկած *հավա/հաբա* պրոտոարմատի դերիվացիաներն են, այն արմատի, որ «*կենդանի էակ*» է նշանակում: Բայց եթե մեզ հարցնենք, թե ի՞նչն է կամ ո՞վ է հավիտենական կյանք տալիս կենդանի հոգուն, ապա այդ անունների առաջին «*Յահ*» («*Եհ*»), «*Հակ*» արմատում ի ցույց կհանենք կրճատված «*ր*» ձայնը. *Հայր-վե/ռբ/բեթ* (համեմատենք նույնպես ռուսերեն «*Յառն-վիտ*» -ի հետ), որ *Հոր կենդանարար Ոգուն* է մատնանշում:

Այս բոլոր (*Յահ-վե, Եհն-վայ, Հա-բեթ, Եվա, Հակ-ռբ*) անուններով սահմանվում են ինչպես Աստվածը, այնպես էլ Աստծո որդիները, որ, ըստ Եսայիա մարգարեի, նույնանում են նաև *Աստծո Կնոջը, Հարսնացուին, «օգնական» Եվային*, որովհետև, ինչպես Տերն է ասում նրա շուրթերով, «**քո այրը քեզ Ստեղծողն է, Զօրաց Եհովայ է նորա անունը, եւ քո Փրկիչը Իսրայելի Սուրբն է, և նա կոչվում է բոլոր երկրի Աստուած:**» (Եսայ 54: 5, «Արարատ» թարգմանություն)

Հետևաբար, բոլոր այս անունները վերաբերում են Աստծուն և Աստծո Որդուն, ով միաժամանակ ինչպես Հոր «օգնական» նույնանում է նրա *Կնոջ, Հարսնացուի* 5 հետ, որը հավերժ է, քանի որ, ըստ Սատվածաշնչի, *Յահվեն/Յեհովան* այսպես է իրեն սահմանում. «*Ես այն Աստուածն եմ, որ է:*» այսինքն՝ որ *հավերժական է*:

Նշանակում է, նույն ձևով պետք է մեկնաբանվի նաև *Հաբեթի* անունը, որի նույնությունը նշված անունների հետ ապացուցվում է նաև *Հաբեթի* անվան նշանակությամբ, որը տպավորվել է հայկական *հավետ*՝ և նույնանշանակ պարսկական *հավե* բառերի մեջ, բացահայտելով Աստծո անվան հետ կապված աստվածաշնչյան YHWH տետրագրամա-ի վերձանումը: Դա նշանակում է, որ *Հաբեթ*, կամ *Յահ-վե/Յեհովա*, *Հակոր* և *Եվա* անունները վերաբերվում են Հավիտյալին:

Դրանցից առաջին երկուսը մատնանշում են *Արիական*, այսինքն՝ *Աստծո հավիտենական կենդանարար Ոգուն*, իսկ *Եվան (հավա/հաբա)*՝ այն *անոթն* է, կամ այն *տունը*, որը պատրաստվել է այդ *Ոգու* համար:

Բայց *Եվան* ընկավ, իր մեջ ընդունելով օտար, Աստծուն հակառակ չարի ոգուն, այսինքն՝ իր հոգու մեջ տեղ տվեց Նոյի (Հոր) կողմից անիծված *Քամի (Քանանի, Կաենի)* ոգուն: Այնուամենայնիվ, Եվայի մաքրումից հետո նրա *անոթը* կվերականգնվի, և նման վերականգնման առաջին օրինակը մենք արդեն տեսանք ի դեմս Մարիամ Աստվածածնի, որ ի տարբերություն *Եվայի*, ընդունեց իր մեջ *Աստծո Սուրբ*, այսինքն՝ *Արիական Ոգին* և ծնեց *Երկնային Հոր կերպարը* ի դեմս *Հիսուս Քրիստոսի*:

Այսպիսով, «*Արիական*» և «*հաբեթական*» սահմանումների լեզվական վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ այդ հասկացությունները հոմանիշներ են և վերաբերում են *Աստծո Ոգուն* և նրա կրողին, այսինքն՝ իսկական *այրին*:

Բայց, ցավոք, Աստծո և մարդու (այրի) թշնամու ազդեցության տակ այդ սահմանումները, ինչպես արդեն նշվեց, սկսեցին առանց որևէ հիմքի վերագրվել

*խառնամրոխներին*, որ կազմվել են էթնիկական, կամ մարմնի և արյունի հիմքի վրա (այսինքն՝ այն հիմքի, որ, ըստ Պողոս առաքյալի, չի ժառանգում Աստծո թագավորությունը (1 Կորնթ. 15:50)), կամ այլ՝ վերը նշված, հիմքերի վրա, այսինքն՝ դիտարկվում են հոգևոր բաղադրիչներից դուրս և, հետևաբար, աղավաղված ձևով:

Նման խեղաթյուրման արդյունք է նաև **սեմիտներ** արհեստականորեն ստեղծված հասկացությունը, որը նույն արհեստական հիմքի վրա կարելի էր անվանել *«եվրոպացիներ»*՝ Եվրոպայի անունով, քանի որ այդ երկու բառի իրական իմաստը՝ *«մարդիկ»* է, ավելի ճիշտ՝ *«մարդկային հոգիներ»* որպես *այդպիսիք*, ինչից հետևում է, որ այդ հասկացությունը ներառում է մարդկային բոլոր ցեղերի ներկայացուցիչներին և ոչ թե մի հատուկ երկրային ցեղի: Ինչպես ասացի, Նոյի որդիների մեջ միայն *Սեմն* է ներկայացնում մարդու հոգևոր *ձևը*, որը ստեղծվել է *Աստծո*, այսինքն՝ *Կենդանաբար Ոգու* հետ *«ամուսնության»* համար: Այլ կերպ ասած, *Սեմը* Աստծո Հոգու կողմից իր սեփական բնակության համար ստեղծված *տունն* կամ *տաճարն* է, որը *Աստծո պատկերն ու նմանությունը* պետք է ներկայացնի: Բայց եթե այդ *ձևի*, կամ *տան*, կամ *տաճարի* մեջ Աստծո փոխարեն *Քամը* բնակություն հաստատի, այդ *ձևը*, կամ *տունը*, կամ *տաճարը* կդառնա *Քամի*, կամ *Կայենի* (որոնք և լեզվաբանորեն, և ըստ աստվածաշնչյան տեքստի էության, միննույն դեմքն են ներկայացնում) կերպարն ու նմանությունը:

Այսպիսով, *Սեմը* նույն *Եվան* է, որը ժամանակավորապես *Քամի* կերպարն է ընդունել: <sup>6</sup> Այդ պատճառով էլ նա ծնում է ոչ միայն *Աստծո որդիներին*, կամ *արիացիներին*, այլ նաև այսպես կոչված *քամյաններին*:

Ինչպես տեսնում ենք, **Քամյաններ** (կամ **Քամիտներ**) հասկացությունը նույնպես ծագում է Նոյի որդիների մասին աստվածաշնչական առակից և վերաբերում է *Քամի* սերունդներին, որ Նոյի (հոր) կողմից անհիծված, ծաղրման և չարության ոգու սերունդներն են: Լեզվաբանության մեջ *Քամյան* անունով է կոչվում Արևելյան և Հյուսիս-Արևմտյան Աֆրիկայի ժողովուրդների լեզուների ընտանիքը, որը ընդգրկում է այնպիսի լեզուներ, ինչպիսիք են հին եգիպտականը, Եթովպիականը, Չադերենը և Բերբերականը իրենց բաժանմունքներով հանդերձ: Բայց այդ լեզուների Քամյան սահմանումը աստվածաշնչյան տեքստի և, մասնավորապես, Քամի անվան սխալ մեկնաբանման արդյունք է, որը գալիս է նախորդ հասկացությունների սխալ մեկնաբանումից, քանի որ, ինչպես արդեն նշվեց, *Քամը* (որպես և *Հաբեթը* (կամ *Արիացին*), ոչ թե մարմնական ցեղ է կազմում, այլ ոգու ցեղ, ավելի ճիշտ՝ *չար ոգու* ցեղ՝ *Հաբեթին* հակառակ: Այդ ոգին կրողները Աստվածաշնչում *Կայենի* որդիներ են կոչվում:

*Քամյաններ* բառը երկրի վրա շատ քիչ է օգտագործվում, քանի որ *Քամի* ներկայացուցիչները թաքցնում են իրենց էությունը և իշխանությունը: **Քամյանը, փաստորեն, նույն Սեմն է, բայց լցված ստախոս և հանցագործ Քամի (Քանանի, Կայենի) ոգով, որը սպանում է իրեն (այսինքն՝ մարդու հոգուն)**: Հենց դա է

պատճառը, որ Նոյը անիծում է նրան, ասելով. «*Անիծեալ լինի ստրուկ Քանանը եւ իր եղբայրների ծառան թող լինի*»:

Ամփոփելով վերը նշվածը, կրկնում են, որ աշխարհում գոյություն չունի *ժողովուրդ* հասկացության հստակ սահմանում, քանի որ այս աշխարհի իշխանը նենգափոխում է **բոլոր** հասկացությունները, այդ թվում նաև *Արիական* հասկացությունը, որը իրականում չի վերաբերում երկրային *ժողովուրդներ/խառնամարտիներին*, ինչպես մտածում են, այլ անհատներին է վերաբերում, որ կրում են *արիական ոգի*, կամ էլ վերաբերում է երկրի վրա բացակայող *Աստծո ժողովրդին*, քանզի չկա այստեղ այնպիսի մի ժողովուրդ, որի բոլոր ներկայացուցիչները արդար լինեն, ինչպես նաև չկա այնպիսի մի ժողովուրդ, որը ամբողջովին բաղկացած լինի չար ոգի կրողներից: Դրա համար, եթե ինչ-որ մեկը իսկապես ցանկանում է իրեն անվանել *Արիացի* կամ *Աստծո Որդի*, ապա թող նախ և առաջ մաքրի իր *Սեմին* (կամ իր *Եվային*) և ընդունի, և արտացոլի *Արարչի Ոգին*, ով սիրում է այն ամենը, ինչին կյանքի շունչ է տվել, և միայն դրանից հետո իրեն իրավամբ *արիացի* համարի:

Ելնելով նույնից՝ պետք է նաև հրաժարվել սատանայի կողմից ներշնչված **«արիացիների»** և **«սեմիտների»** կեղծ ու անտեղյակ ընդդիմությունից, քանի որ, ինչպես տեսանք, երկրի վրա չկա նաև *սեմիտների* ցեղ: **Ցանկացած անձ *Սեմի սերունդից է, այսինքն այն միակ՝ մարդկային ձևից, որ Տերը պատրաստել է իր մարմնավորման համար:*** Վերջինը, սակայն, կարող է իրականանալ միայն Աստծո Որդու *Սեմի* հետ «ամուսնություն» դեպքում: Դա նշանակում է, որ Տիրոջ ի հայտ գալը *Սեմում* (այդ ձևում) կախված է նրանից, թե ո՞ր ոգին է ապրում այդ *ձևի* մեջ, քանզի **Սեմը (մարդը) միայն այն ժամանակ է դառնում Աստծո պատկերն ու նմանությունը կամ իսկական *արիացի*, երբ նրա մեջ բնակվում է *արիական, կամ հարեթական, կյանքի ոգին*:** Այդ այն «ամուսնությունն» է, որ նկատի ունի Նոյը, երբ, ինչպես վերևը տեսանք, օրհնում է *Հաբեթին Սեմի տան մեջ*: Այդ նաև այն «ամուսնությունն» է, որը, ինչպես տեսանք, ներկայացված է *Հաբեթի, Յահ-վեի (Յեհ-ովայի), Հակ-ոբի* երկարմատ անուններում: Այդ նույն «ամուսնությունն» է, որ նկատի ունի Աստվածը, երբ ասում է. «*Աղամն ասաց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչուի կին, որովհետեւ իր ամուսնուց ստեղծուեց*»: *Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանայ իր կնոջը, եւ երկուսը պետք է լինեն մի մարմին*»: (Մենդոց 2: 23-24)

*Աղամ* անվան տակ, որ Եվայի հետ մեկ մարմին պիտի կազմի, *Աստծո Ոգին* է ենթադրվում, այսինքն՝ *Հաբեթը*, որ *Սեմի* հետ պիտի մեկ մարմին կազմի:

Բայց երբ *Սեմի (Եվայի)* մեջ *Քամի* ոգին է հաստատվում, որ՝ մահվան ոգի է, *Սեմը* դառնում է *Քամի* կերպարն ու նմանությունը և *Քամի* հետ է մեկ մարմին կազմում: <sup>7</sup>

Արտաքինից տարբեր ոգիներ կրողները ոչնչով չեն տարբերվում միմյանցից, քանի որ բոլորը մարդու (*Սեմի*) ձև ունեն: Միակ բացառությունը, երբեմն կարող է կազմել նրանց աչքերի արտահայտությունը: Բայց աչքերը նույնպես կարող են



ստել: Դրա համար է Քրիստոսը խորհուրդ տվել, որ ճանաչենք դրանց իրենց գործերի պտուղներով: (Մաթ. 7: 16)

Բնականաբար, նույնպես խարուսիկ է և ամբողջովին անհեթեթ, «անտիսեմիտ» հասկացությունը, որը իրականում ոչ այլ բան է նշանակում, քան «մարդու հակառակորդ», այսինքն ընդհանրապես մարդ արարածի հակառակորդ և ոչ թե մի որոշակի մարդկային ցեղի հակառակորդ, ինչպես մտածում են, որովհետև բացի Մեմփ ցեղից, ուրիշ մարդկային ցեղ գոյություն չունի: Բայց Մեմփ միայն այն դեպքում է օրհնված, երբ իրեն մեջ արդարասեր Հաբեթի ոգին է ապրում: Այնպես որ ոչ մի մարդ չի կարող «անտիսեմիթ» անվանվել, որովհետև դա կնշանակի ժխտել նրա մարդկային էությունը:

Նշված բոլոր աղավաղումները Սուրբ Գրքի սխալ մեկնաբանման արդյունք են, որի իմաստը Աստծո Խոսքի միտումնավոր հեղաթյուրումն է Քամի / Կայենի որդիների կողմից: Իսկ Արարչի Խոսքի իրական գնահատման և մեկնաբանման միակ ճանապարհը՝ սերն է Նրա բոլոր արարածների հաղեպ, ճշմարտության հանդեպ, որը ապահովում է արարչության կենսունակությունը, և արդարության հանդեպ, որի հիմքում համընդհանուր բարիքն է ընկած: Այլ կերպ ասած՝ Սուրբ Գրքի ճիշտ մեկնաբանման միակ պայմանը այն ճշմարտության ընկալումն է, որ յուրաքանչյուր անձի իրական բարիքը կախված է ընդհանուր բարիքից, և նաև այն, որ ուրիշների արյան և արցունքների վրա կառուցված բարիքը պատրանքային է և հանգեցնում է մարդու մեջ Մեմփ (Եվայի) մահվան, այսինքն՝ նրա հոգու մահվան, մարդու իսկ մահվան: Ի վերջո, ինչպես արդեն ասացի, հենց Մեմփ / մարդու կյանքի և մահվան համար է այս աշխարհի պատերազմը, և ինչպիսին կլինի նրա արդյունքը ամեն մարդու համար, կախված է նրանից, թե ինչպիսի ոգի կհաստատվի նրա մեջ: Քամի ոգին կրողների ուժն նրանումն է, որ նրանք խաբեություն և խառնաշփոթ են ցանում արիացիների մեջ, որոնց մարդկային հոգին, ի շնորհիվ իրենց բարեհոգության և ճշմարտասիրության, դեռ կենդանի է, բայց սխալ է ընկալվում իրենց կողմից: Օգտվելով դրանից՝ Քամի որդիները, այս սխալ ընկալումը հավերժ պահպանելու համար, անընդհատ զրպարտում են նրանց և պղտորում գիտելիքների աղբյուրը, քանի որ պղտոր ջրի մեջ ավելի հեշտ է իրենց ցանցը գցել չհաստատված հոգիներին: Բայց բավական է, որ ոգով արիացիները, որ ապրում են աշխարհի բոլոր ցեղերի մարմնի մեջ, գիտակցեն դա և միավորվեն, - ամբողջ երկրի վրա տեղի կունենա այն, ինչի մասին Տերը խոսեց Եսայիա մարգարեի շրթունքներով.

*«Ես իրաւունքը՝ չափին հաւասար, եւ արդարութիւնը՝ կշռքին հաւասար պիտի անեմ, եւ կարկուտը պիտի լ ստութեան պատսպարանը խորտակէ, եւ թաքուստը ջուրերը պիտի ողողեն:»* (Եսայ 28: 17«Արարատ» թարգմանություն)

Այնուհետև, քամիանների, այսինքն՝ աստվածաշնչյան օձի կերպարը կրողների հետ միասին, վերջ կտրվի ամեն մի ժամանակավոր և փչացած բանի: Արարածը կառողջանա և կստանա հավերժություն, նման Արարչի հավերժությանը: Այլ կերպ ասաց՝ կկատարվի Նոյի օրհնությունը և արարչության մեջ (Մեմփ) կհաստատվի Կենդանարար Արիական Ոգին, կամ Հաբեթը (Յահվեն, Հակոբբ),

որը ոչ այլ որ է, քան մեր *Տեր Հիսուս Քրիստոսը*, ում մասին է ամբողջ Աստվածաշունչը: (Հովհ 5: 39)

- 
1. Տե՛ս «Загадочный Апарат» իմ աշխատանքը, Բուհնոս Այրես 2004–2012թթ
  2. Այստեղ թարգմանիչը սխալմամբ *ոգու* փոխարեն *հոգի* է գրել: Ցավոք, աստվածաբանության մեջ սխալ մի կարծիք է ստեղծվել, որի հետևանքով *հոգի* և *ոգի* հասկացությունները շփոթվում են: - Այդ հարցին ես անդրադարձել եմ համարյա իմ բոլոր այլ գործերում:
  3. Տե՛ս «Загадка сыновей Ноя» գլուխը իմ «Шесть дней творения и седьмой день» գործի մեջ, Буэнос-Айрес 2013, Кн.2, ч.1, гл. 3 .:
  4. «Տարեդարձերի գիրքը» ապոկրիֆների շարքում է դասվում, չնայած նրան, որ շատ հարցերում լուսաբանում է աստվածաշնչական տեկստերը: Տես. Книга Юбилеев: Введ. и рус. пер. проф. прот. А. Смирнова: 2-й вып. апокрифов Ветхого Завета. — Казань, 1895. Гл.VIII - «*Да будет прославлен Господь, Бог Сима, и да вселится Господь в жилища Сима!*».  
[http://krotov.info/library/bible/comm3/vz\\_apokr1.htm](http://krotov.info/library/bible/comm3/vz_apokr1.htm)
  5. Այս մասին լրացուցիչ մանրամասնությունների համար տե՛ս իմ գրությունները: Օրինակ՝ «Таинство Пресвятой Троицы», Буэнос-Айрес 2012: հավաքածուի «О божественном прообразе мужчины и женщины или о месте мужчины и женщины в Святой Троице» հոդվածը: Նաև «Таинство Пресвятой Девы Марии Богородицы» (Библейское наблюдение) Буэнос – Айрес 2016, գործի մեջ, և այլ աշխատություններում:
  6. Իմ մյուս գրություններում ես ցույց եմ տվել, որ Սուրբ Գրքի խոսքը ենթակա չէ ժամանակի, պարունակելով իր մեջ միշտ նույն արարչության էությանը վերաբերող տեղեկությունը: Տարբեր ժամանակներում այդ տեղեկությունը տրված է այդ ժամանակներին բնորոշ հասկացությունների հիման վրա ստեղծված առակների միջոցով: Այնպես որ Ադամի, Եվայի և Օձի մասին առակը համապատասխանում է Նոյի երեք որդու մասին առակին, որտեղ Հաբեթը՝ նույն Ադամն է, Սեմը՝ Եվան, իսկ Քամը՝ Օձը: Նույն նշանակությունը ունեն Հայկը, Եբերը և Բաբը (Բելը): Նույնը Աբրահամը, Սարան և Ագարը: Նույնը՝ Սահակը, Հակոբը և Եսավը:
  7. Տե՛ս «Каков библейский Бог и Его творение. Два райских дерева» Буэнос-Айрес, 2019. իմ գործը:

2019թ.

*Հատուկ շնորհակալություն եմ հայտնում Երեվանի պետական կոնսերվատորիայի մայրենի լեզվի ուսուցիչ՝ Մարգարիտա Սմբատյանին իր՝ հայոց քերականությանը վերաբերող խորհուրդների համար:*